

ՁԼՄ-ներին ուղղորդող էթիկական նորմերը

***Լուրն ինչ-որ տեղ նման է քամու,
բայց ամբողջ խնդիրն այն է,
թե ում առազաստներին է այն փչում՝***

Քաղաքական համակարգի տարրերի շարքում իրենց ուրույն տեղն ունեն գանգվածային լրատվության միջոցները: Նրանց կարևորագույն խնդիրներից մեկը հանրությանը տեղեկացնելն է այն ամենի մասին, ինչը հետաքրքրում է կամ կարող է հետաքրքրել ողջ հասարակությանը կամ նրա որևէ մասին: Սակայն ՁԼՄ-ների նպատակները որպես կանոն չեն սահմանափակվում զուտ այդ խնդրի լուծման շրջանակներում: Տեղեկատվություն ընտրելիս և այն հանրությանը ներկայացնելիս գանգվածային հաղորդակցության միջոցները ձգտում են դիտողի, ունկնդրի, ընթերցողի գիտակցության մեջ ձևավորել իրենց համար ցանկալի գաղափարներ, հասարակական երևույթների ու գործընթացների վերաբերյալ գնահատականներ, դրդել նրանց որոշակի գործողությունների, կամ կողմնորոշել ձեռնպահ մնալ որոշակի գործելակերպից: Բայց ամբողջ խնդիրն այն է, թե ինչ ձևով են դա անում: Արդյոք այն չի վնասում որևէ մեկի շահերին, ասել է, թե՛ պահպանվում են էթիկական կանոնները, չի՞ ոտնահարվում խոսքի, մամուլի ազատությունը, որը սահմանափակելն ինքնին կնշանակի խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը, ժողովրդավարական որոշումների ընդունմանը և նպաստել բռնությանը: Ինչպես խոսքի ազատության իրավունքը, այնպես էլ դրա սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով՝ կանայական գործողությունները բացառելու համար: Դրանք միաժամանակ պետք է պաշտպանեն և քաջալերեն քաղաքացիների և լրատվամիջոցների անարգել, առողջ ու բացահայտ երկխոսության իրավունքը:

20-րդ դարավերջին ժողովրդավար հասարակություններում զարգացավ մի հիմնական գաղափար, որ «ազատ միտքը պետք է առավելագույնս պաշտպանված լինի պետության կողմից»:²

Սակայն խոսքի ազատության իրավունքի կողքին ապրում և ամեն օր իրենց կարևորությունն են փաստում մարդու՝ Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքներ և ազատություններ (անձնական կյանքի իրավունք, հեղինակության, պատվի, արժանապատվության իրավունք, արդար

1. ProMedia, Լրատվության հիմունքներ, Երևան, 2000, էջ 5:

2. Դոյդոյան Շ., Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երևան, 2001, էջ 14:

դատավարության իրավունք և այլն): Բնականաբար, այդ իրավունքների խախտման հետևանքով ծնունդ առած բախումներն ու կոնֆլիկտային իրավիճակները հարթելու, կարգավորելու և վերջին հաշվով դրանցից խուսափելու համար ձևավորվել են մի շարք կարգավորիչ մեխանիզմներ, ինստիտուտներ, իսկ տարբեր լրատվամիջոցներ էլ, ելնելով իրենց սեփականատիրական ձևից ու հիմք ընդունելով իրենց որդեգրած քաղաքականությունն ու դիրքորոշումը, ընդունեցին մասնագիտական օրենքներ ու կոդեքսներ (օր. «Վաշինգտոն փոստ», «Յու էս էյ Ռըդեյ օրաթերթերը և այլ լրատվամիջոցներ), լրագրողների գործունեությանը վերաբերող վարքականոցներ, որոնք մի կողմից կանոնակարգեցին խմբագրական աշխատանքը, իսկ մյուս կողմից էլ նպաստեցին էթիկական խնդիրների կարգավորմանը: Չնայած տարբեր երկրների տարբեր լրատվամիջոցներն ունեն իրենց համապատասխան էթիկական նորմերն ու կոդեքսները, այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ նրանք բոլորն էլ առաջնորդվում են խոսքի ազատության, ճշգրտության, օբյեկտիվության, անաչառության սկզբունքներով:

Ստորև ներկայացվող եվրոպական մի շարք երկրների, ինչպես նաև ամերիկյան տեղեկատվական կազմակերպությունների և էթիկական դաշտը կարգավորող նրանց կողմից ընդունված կոդեքսների ուսումնասիրությունը թերևս դա են փաստում: 1991թ. հունվարի 21-ին Վիեննայում Մամուլի ավստրիական խորհրդի կողմից ընդունված «Պատվի կոդեքսում» ամրագրված է «Ժուռնալիստիկան առհասարակ ենթադրում է ազատության և պատասխանատվության համատեղում: Տեղեկատվության մեկնաբանման և շարադրման ազատությունը մամուլի ազատության հիմնական մասն է:

Անթույլատրելի է խոչընդոտել տեղեկատվության հավաքմանը և տարածմանը: Բայց վերջինիս դեպքում լրագրողի կարևորագույն խնդիրն է լինել բարեխիղճ և ճշգրիտ»³:

Ձգտելով պաշտպանել մասնագիտական ճշգրտությունը և խոսքի ազատությունը՝ Բելգիայի հրատարակիչների ասոցիացիան, Ժուռնալիստների համընդհանուր ասոցիացիան և Ինֆորմացիոն հրատարակությունների ազգային ֆեդերացիան 1982թ. ընդունեցին «Ժուռնալիստական գործունեության սկզբունքների մասին» կոդեքսը, որի 1-ին կետն ևս վերաբերում է մամուլի ազատությանը. այն է՝ «Մամուլի ազատությունը դրսևորվում է որպես խոսքի ազատության հիմնական երաշխավորներից մեկը՝ առանց որի անհնար է ապահովել քաղաքացիական մյուս ազատությունները: Մամուլին պետք է հնարավորություն ընձեռվի առանց որևէ խոչընդոտի ձեռք բերել և հրապարակել տեղեկատվություններ և մեկնաբանություններ՝ այդպիսով նպաստելով հասարակական կարծիքի ձևավորմանը բազմակարծության պայմաններում: Իսկ փաստերի հավաքումն ու հրապարակումը պետք է հիմնվի միայն ճշգրտության վրա»⁴:

Այն հավաստումը, որ լրագրողներն ունեն ազատ տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունք, փաստում է նաև Յունգարիայի Ժուռնալիստների ազգային խորհուրդը, որը 1994թ. ընդունեց Ժուռնալիստների

3. Фонд защиты гласности, Профессиональная этика журналиста, Москва, 2002, ст. 81:

4. Նույն տեղում, էջ 99:

գործունեությունը կանոնակարգող էթիկայի կողքես, որի 2-րդ կետում ասված է. «Ժուռնալիստներն իրավունք ունեն ստանալ ինֆորմացիա, տալ հրապարակումներ և քննադատություններ: Բացի այդ՝ նրանք պարտավոր են հարգել երկրի գործող Սահմանադրությունը, չխախտել մարդու իրավունքները, չհրահրել թշնամություն առանձին անձանց, ազգերի, ռասաների, կրոնական խմբավորումների միջև, և, որ ամենակարևորն է, չտարածել կեղծիքներ ու զրպարտություններ՝ վիրավորելով որևէ մեկի պատիվն ու արժանապատվությունը: Ուստի, պարտավոր են ստուգել տեղեկատվության ճշմարտացիությունը, ապա նոր միայն հրապարակել համապատասխան ձևով»⁵:

1994թ. հունիսի 23-ին Ռուսաստանի ժուռնալիստների միության կողմից Մոսկվայում ընդունվեց էթիկայի կողքես, ուր ասվում է.«Ժուռնալիստը պետք է մեկնաբանի և տարածի միայն այնպիսի ինֆորմացիա, որի իսկության մեջ համոզված է և քաջատեղյակ է վերջինիս աղբյուրին: Ավելին, նա պետք է խուսափի իր ոչ ճիշտ կամ կասկածելի հրապարակումներով որևէ մեկին վնաս հասցնելուց: Սա էթիկայի կոպիտ խախտումներից է, ինչի դեպքում տվյալ ժուռնալիստը պարտավորվում է հերքում տալ այն լրատվամիջոցով, որով հրապարակվել է ինֆորմացիան»⁶:

Վերոհիշյալ սկզբունքներն ու չափանիշները կարևոր նախապայման են հասարակությանը ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովելու համար: Անկախ երկրի տնտեսական վիճակից, նրա տարածքում գործունեություն ծավալող զանգվածային լրատվամիջոցներն ու տարբեր լրատվական կազմակերպությունները թեև ձևավորում են համապատասխան լրատվական դաշտ, այնուամենայնիվ նրանք բոլորն էլ առաջնորդվում են մանուկի ազատության, ճշգրտության, օբյեկտիվության հիմնական գաղափարով:

1998թ. ԱՄՆ-ի Պրոֆեսիոնալ ժուռնալիստների ընկերակցության ընդունած էթիկայի կողքեսի որոշ դրույթներ ևս վերաբերում են ճշգրտությանը. այն է՝ «Ընկերակցությունը գտնում է, որ ժուռնալիստների գլխավոր պարտքն է ծառայել ճշմարտացիությանը: Մենք հավատում ենք, որ իրազեկելով մարդկանց՝ ժուռնալիստները կառաջնորդվեն գործող Սահմանադրությամբ՝ ապահովելով մարդկանց՝ ճշմարտությունն իմանալու իրավունքը: Սա էլ իր հերթին ժուռնալիստներից պահանջում է գործել առողջ մտածելակերպով, օբյեկտիվության, փաստերի ճշգրիտ, արդարացի շարադրման պայմաններում»: Ավելի հատկանշական է կողքեսի 4-րդ կետը, որում ասվում է. «Մարդկանց վստահությունն է ընկած պրոֆեսիոնալ, բարձրանակարգակ ժուռնալիստիկայի հիմքում: Մեր գլխավոր նպատակն է ճշմարտության որոնումը, իսկ տեղեկատվության շարադրման ժամանակ օբյեկտիվության ձգտումը փորձառու պրոֆեսիոնալի աշխատանքի բնորոշ գծերից մեկն է, և ժուռնալիստները պատասխանատվություն են կրում իրենց սեփական վերլուծությունների ու մեկնաբանությունների համար»⁷:

Հիմք ընդունելով Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափանիշները և

5. Նույն տեղում, էջ 111:

6. Նույն տեղում, էջ 214:

7. Նույն տեղում, էջ 36:

«Ժուռնալիստական էթիկայի մասին» Եվրախորհրդի պառլամենտական ասամբլեայի ընդունած բանաձևը՝ 1998 թ-ին Ադրբեջանի մամուլի ակումբն ընդունեց մասնագիտական էթիկայի կոդեքսը: Համաձայն կոդեքսի 1-ին կետի (իր բոլոր ենթակետերով)՝ «Ժուռնալիստիկայի գլխավոր նպատակն է հասարակությանը ապահովել տեղեկատվությամբ: Մամուլի ազատությունը, ժուռնալիստներին տալով ազատ գործելու լայն հնարավորություններ, միաժամանակ նրանցից պահանջում է պատասխանատու լինել իրենց ամեն մի բառի համար: Եվ պատահական չէ, որ ճշգրտությունն ու օբյեկտիվությունը հանդիսանում են ժուռնալիստի պրոֆեսիոնալիզմի հիմնական չափորոշիչները»:⁸

Էթիկական չափանիշներին լրագրողները պարտավոր են ուղղակիորեն հետևել իրենց գործունեության ողջ ընթացքում՝ այդպիսով խուսափելով ավելորդ գլխացավանքներից:

Հայաստանում ևս Երևանի Մամուլի ակումբը, հավատարիմ մնալով ժուռնալիստական էթիկայի միջազգային չափանիշներին, 1995թ-ի հուլիսի 18-ին ընդունեց էթիկայի կոդեքս և կոչ արեց հանրապետության տարածքում գործող լրատվամիջոցներին հետևելու վերջինիս դրույթներին՝ անկախ նրանց քաղաքական ու կուսակցական կողմնորոշումները: Հետևաբար, այս կոդեքսի հեղինակները, հիմք ընդունելով խոսքի ազատությունը, փաստում են. «Էթիկական հիմնական սկզբունքը, որին հետևելու են լրագրողները, օբյեկտիվության սկզբունքն է: Եվ մենք՝ լրագրողներս, առաջնորդվելով այս կոդեքսով, նպատակ ունենք նպաստել ազատ և ժողովրդավար մամուլի կայացմանը»:⁹

Նմանատիպ էթիկական դրույթներն ամրագրված են աշխարհի բոլոր երկրների լրատվական դաշտը կարգավորող էթիկական կոդեքսներում: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ժուռնալիստիկայի արդյունավետությունը հիմնականում կախված է ընդունված էթիկական և իրավական չափանիշներին հետամուտ լինելուց: Ամեն մի իրավական երկրում զանգվածային լրատվամիջոցների գործունեության հիմքը հանդիսանում է տեղեկատվության մատչելիությունն ու խոսքի ազատությունը: Բայց ցանկացած տիպի ազատություն նախ և առաջ ենթադրում է որոշակի սահմանափակում՝ էթիկական և իրավական չափանիշների պահպանմամբ: Ինչքան մեծ է ազատ գործելու հնարավորությունը, այնքան ժուռնալիստիկային ներկայացվող հիմնական պահանջը, ասել է, թե՛ հասարակական կարծիքի վրա ազդելը, առաջարկվող ազատությունից օգտվելու ավելի մեծ սահմանափակումներ է ենթադրում:

Ռուս տեսաբան Վ.Վ.Վորոշիլովը, առհասարակ լրագրողի գործունեության ընթացքում կարևորելով էթիկական և իրավական նորմերին հետևելու անհրաժեշտությունը, ապա դրանց իմացությունը, գտնում է, որ «լրագրողը ոչ միայն ցուցաբերում է բարձր իրավական մակարդակ, այլև նպաստում է ՋԼՄ-ների արդյունավետության բարձրացմանը՝ նման ձևով տվյալ

8. Նույն տեղում, էջ 87:

9. www.gdf.ru

լրատվամիջոցին գերօ պահելով հնարավոր իրավական սխալներից ինֆորմացիայի հավաքման ու տարածման ընթացքում»¹⁰:

Այդուհանդերձ, յուրաքանչյուր լրագրողի մասնագիտական պարտքն է հանդես գալ հավաստի, օբյեկտիվ հրապարակումներով, որոնք ոչ մեկը չի կարողանա հերքել: Այս ամենը հանգեցնում է նրան, որ լրագրողը պետք է աչքի ընկնի իրավական որոշակի գիտելիքներով և խստորեն հետևի իր երկրի տարածքում գործող ժուռնալիստական էթիկայի կոդեքսին:

Ծանոթագրություն

1. ProMedia, Լրատվության հիմունքներ, Երևան, 2000:.
2. Դոյդոյան Շ., Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երևան, 2001:.
3. Фонд защиты гласности, Профессиональная этика журналиста, Москва, 2002 г.
4. Ворошилов В.В., Журналистика, Санкт-Петербург, 2002 г.
5. www.gdf.ru

10. В. В. Ворошилов, Журналистика, Санкт-Петербург, 2002, ст.123